ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հրատարակություն Սոցիալական Ապահովագրության Հայաստանի Հանրապետության Գոսնձաբկոմի

ԵՐԵՎԱՆ
1928 թ.

368.4
Հ-11

368.4
Հ-11 ա
1 MAR 201
ԱՄՈ
36478

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

Հրատարակություն Սոցիալական Ապահովագրության Հայաստանի Հանրապետական Գանձարկղի

ՅԵՐԵՎԱՆ
1928 թ.

09 SEP 2013
44090

Գրառեպ. № 1077 (ր) տիրաժ 600
Հայպոլիգրաֆի 2-րդ տպ. Ցերևան № 239

ԿԱՆՈՆՆԵՐ

Սոցիալական Ապահովագրական պատգամավորական ժողովի։

1. Ի զարգացումն գործարկումներին և տեղկոմներին կից աշխատանքի պաշտպանության հանձնաժողովների կանոնադրության 5-րդ հոդվածի «Օ» «ր» կետերի («ՏՐՈՒԴ» 1924 թ. № 21) ապահովագրվածների և սոցապմարմինների միջև սերտ կապ ստեղծելու նպատակով պարբերաբար կազմակերպվում են սոցապ պատգամավորների խորհրդաժողովներ.

2. Սոցապ պատգամավորները ընտրվում են աշխատանքի պաշտպանության հանձ

նաժողովների կողմից և նրանց կազմից։

3. Ձեռնարկությունների և հիմնարկությունների Աշխատաշտանության հանձնաժողովները 25-ից մինչ 200 զբաղված բանվորական ուժից տալիս է մեկ պատգամավոր, 200-ից մինչև 400-2 պատգամավոր, 400-ից ավել 3 պատգամավոր, իսկ այնտեղ, որտեղ թիվը չի ներում, պակաս է, թողնել Աշխատաշտանության հանձնաժողովների վրա այդ աշխատանքների կատարումը։

4. Ընտրված պատգամավորներն իրենց լիազորությունը պահպանում են ամբողջ այն ժամանակամիջոցում, որի ընթացքում աշխատաշտանության տվյալ հանձնաժողովը պահպանում է իր լիազորությունը։

5. Սոցապ պատգամավորական խորհրդաժողովները հրավիրվում են սոցապմարմինների կողմից 3 ամիսը մեկ անգամ։

6. Սոցապ պատգամավորներն իրենց աշխատանքները տանում են վոչ աշխատանքային ժամերին և վարձատրություն չեն ստանում։

7. Սոցապ. պատգամավորները հաշվետու չեն գործարկոմի տեղկոմի առջև։

Սոցապ պատգամավորների պարտականությունները

1. Մշտական և կենդանի կապ հաստատել սոցապմարմինների հետ.

2. Պարզել իրենց հիմնարկ ձեռնարկության աշխատավորների սոցապմարմինների միջև պատահած թյուրիմացությունները։

3. Բացատրել իրենց հիմնարկ-ձեռնարկությունների աշխատավորներին ապահովագրական օրենքներն ու կանոնները և սոցապգծով ոգնություն ստանալու կարգը։

4. Հաշվի առնել բանվորների և ծառայողների ցանկությունները ու առաջարկությունները սոցապմարմինների գործունեության մասին, հաղորդել այն համապատասխան սոցապմարմիններին և հետևանքի մասին իրազեկ դարձնել բանվորներին ու ծառայողներին։

5. Հետաքրքիր լինել, որ բանվորներն ու ծառայողներն ապորինաբար նպաստ չը-ստանան և ի չարը չգործադրեն իրենց ի-րավունքները։

6. Հետաքրքիր լինել, որ իրենց հիմնարկ-ձեռնարկությունները կանոնավոր և ժամանակին մուծեն սոցապվճարները, այլ և ժամանակին ներկայացնեն հաշվական տեղեկագրերը։

7. Հիմնարկ-ձեռնարկություններում և ակումբներում կազմակերպել զրույցներ, զեկուցումներ և դասախոսություններ սոցիալական ապահովագրության մասին և տարածել մատչելի գրականություն։

8. Սոցապմարմինների հանձնարարությամբ մասնակցել սոցապմարմիններում կատարվող հետաքրքրումներին՝ պարզելու թե ապահովագրվածները վորքան ճիշտ են ստանում նպաստներն ու թոշակները։

9. Առանձին կոնկրետ դեպքերում պարզել, թե ինչու յե այս կամ այն նպաստի կամ թոշակի ուշացումը ձգձգվում։

Պետգամավորական խորհրդաժողովների պարտականությունները

1. Լսել և քննել սոցապմարմինների և նրանց վերատեսուչ հանձնաժողովների զեկուցումները։

2. Նախնական քննության յենթարկել

սոցապմարմինների աշխատանքային ծրագիրը և նախահաշիվը։

3. Քննել սոցապգծով հրատարակվելիք կարևորագույն վորոշումներն ու նախագծերը։

4. Լսել առանձին բուժ. հիմնարկների զեկուցումները բուժոգնության մասին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0212743

44.090